ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 110-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 18-ը հոկտեմբերի 2022 թվականի թիվ 10 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 18-ը հոկտեմբերի 2022 թվականի թիվ 10 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. <<Արենիի զարգացում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու և <<Արենիի զարգացում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին:

3. Արենի համայնքի ղեկավարի 2022 թվականի երրորդ եռամսյակի բյուջեի կատարման հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:

4. Արենի համայնքի 2022թվականի տարեկան բյուջեի եկամտային մասում ավելացում և ծախսային մասում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին:

5. <<Արփա>> բնապահպանական հիմնադրամի կողմից հատկացված 1 000 000 ՀՀ դրամը, 2021թվականին վայրի կենդանիներից տուժած համայնքի բնակիչներին հատկացնելուն համաձայնություն տալու մասին:

6. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 0.04866հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

7. Արենի համայնքի Խաչիկ բնակավայի բնակիչ Արմեն Մանուկյանի կողմից իրականացվող սոցիալական ծրագրի նկատմամբ մշտադիտարկում և հսկողություն իրականացնելու նպատակով ժամանակավոր հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկը քննարկելու և համայնքապետարանի կողմից հատկացված գումարով 1 գլուխ հղի կով գնելուն համաձայնություն տալու մասին:

8. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի բնակիչ Գառնիկ Միքայելյանի դիմումը քննարկելու և դրական աջակցություն ցուցաբերելու մասին:

9. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը մրցույթով, վարձակալությամբ հատկացնելու մասին:

10. Արենի համայնքի ավագանու 18.09.2020թվականի թիվ 108 և 19.04.2022թվականի թիվ 44-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին:

11. Արենի համայնքի սեփականությունն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից աճուրդով օտարելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 111-Ա

<<ԱՐԵՆԻԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ԵՎ <<ԱՐԵՆԻԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հիմնադրել <<Արենիի զարգացում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2. Հաստատել <<Արենիի զարգացում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Վայոց ձորի մարզ, Արենի
համայնքի ավագանու՝
18.10.2022 թ.-ին կայացած թիվ 10 նիստի
թիվ 111-Ա որոշմամբ

Արենի համայնքի ղեկավար՝
_____ Հ. Սահակյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Կազմված է _____թ. և բաղկացած է _թերթից
Տպագրված է ընդամենը _____օրինակ
ՕՐԻՆԱԿ _____

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ
ԿՈՂՄԻՑ _____
ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ _____
Վկայական _____
Հարկ վճարողի հաշվառման համարը _____
Պետական ռեգիստրի
տարածքային բաժնի պետ՝
_____

«ԱՐԵՆԻԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վայոց ձորի մարզ, գ. Արենի 2022

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի «ԱՐԵՆԻԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (հետագայում՝ Կազմակերպություն) համարվում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն:
Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքն է (այսուհետ՝ Հիմնադիր), որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Վահոց ձորի մարզի Արենի համայնքի ղեկավարը:
Կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնքի ավագանու՝ 18.10.2022 թ.-ի թիվ 111-Ա որոշման համաձայն:

1.2 Կազմակերպության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման պետական գրանցման) պահից:

1.3 Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը և իր անվանումը (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ, օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու անհատականացնող այլ միջոցներ:

1.4 Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք), Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.5 Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադիր պարտավորությունների համար:

1.6 Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Կազմակերպության պարտավորությունների համար: Կազմակերպությունն իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.7 Կազմակերպության անվանումն է՝ հայերեն լրիվ՝ «ԱՐԵՆԻԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, կրճատ՝ «ԱՐԵՆԻԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀՈԱԿ

1.8 Կազմակերպության գտնվելու վայրը, փոստային հասցեն՝ 3604, ՀՀ, Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, բն. Արենի, 15 փողոց, թիվ 3:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Կազմակերպության ստեղծման նպատակն է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնքի տարածքում զարգացման ծրագրերի իրականացումը՝ կոշտ և փափուկ ենթակառուցվածքների հզորացմամբ:

2.2 Կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակներն են.

- Արենի համայնքում տնտեսական գործունեության իրականացնող ընկերությունների համար բարենպաստ միջավայրի ստեղծում
- համայնքային ենթակառուցվածքների բարեկարգում, բարելավում, զարգացում
- Արենի գինու և խաչիկի գաթայի փառատոնների կազմակերպում և համանման փառատոնների ստեղծում և կազմակերպում
- մատուցած ծառայությունների դիմաց վճարների գանձում
- տեղական և միջազգային դրամաշնորհային և ներդրումային ծրագրերին մասնակցություն, ֆինանսական նոր միջոցների ներգրավում
- համայնքում զբոսաշրջային կազմակերպությունների հետ տարվող աշխատանքների կազմակերպում
- զբոսաշրջային ռեսուրսների հաշվառում, գրանցում, ռազմավարության մշակում, իրականացում
- մասնագետների վերապատրաստում
- օրենքով չարգելվող այլ գործունեությունների իրականացում:

2.3 Իր առջև դրված խնդիրների արդյունավետ իրականացման համար Կազմակերպությունը՝

- իր կողմից կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի հիման վրա իրականացնում է երկկողմանի ու բազմակողմանի կապեր հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների գիտական հիմնարկների, այլ կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ
- պայմանագրային հիմունքներով ներգրավում է այլ կազմակերպությունների կամ անհատների
- կատարում է տարատեսակ աշխատանքներ կադրերի պատրաստման, մասնագետների փոխանակման, մշակութային-լուսավորչական և այլ բնագավառներում,
- իրականացնում է հրատարակչական գործունեություն:

2.4 Կազմակերպությունը կարող է իրականացնել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն

նախատեսված գործունեության տեսակներ:
Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Կազմակերպությունը բացի լիցենզավորվող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Կազմակերպությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Պետական գրանցման պահից Կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:
Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռքբերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և (կամ) օտարերկրյա բանկերում՝ հաշվարկային բանկային հաշիվներ (ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ տարադրամով):

3.2 Կազմակերպությունը կարող է լինել այլ կազմակերպության հիմնադիր (մասնակից) միայն հիմնադրի որոշմամբ:

3.3 Կազմակերպությունն իրավունք ունի ստեղծել (հիմնադրի որոշմամբ) առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ), ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում:
Կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Կազմակերպությունը կարող է ստեղծել հիմնարկներ:
Օտարերկրյա պետություններում առանձնացված ստորաբաժանումների ստեղծումն իրականացվում է տվյալ երկրի օրենքներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:
Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Կազմակերպության հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Կազմակերպության լիազորագրերի հիման վրա:

3.4 Կազմակերպությունն իրավունք ունի.
Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկումտը կամ այլ օգտակար արդյունքը,

3.4.1 ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով, օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր, հիմնադրի որոշումների կամ սույն կանոնադրության համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, մեկ տարուց ոչ ավելի ժամկետով՝ իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնել վարձակալության,

3.4.2 օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու, օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ, արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան

իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և (կամ) ձեռնարկություններ և անդամակցել իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների,

3.4.3 օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.5 Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

3.6 կազմակերպությունը պարտավոր է

3.6.1 օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում ու ներկայացնել վիճակագրական հաշվետվություն,

3.6.2 աշխատանքային պայմանագրեր կնքել Կազմակերպության աշխատակիցների հետ, պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ հարկ եղածին պես չկատարելու այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,

3.6.3 օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Կազմակերպության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները, հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը,

3.6.4 ապահովել Կազմակերպության փաստաթղթերի (Կազմակերպության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Կազմակերպության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, տնօրենի հրամանների, հրահանգների ու կարգադրությունների, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը:

3.6.5 Կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ

4.1 Կազմակերպության հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

4.2 Կազմակերպության հիմնադիրն իրավունք ունի՝

4.2.1 հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը (այդ թվում՝ գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները),

4.2.2 կասեցնել կամ ուժը կորցրած ճանաչել Կազմակերպության տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

4.2.3 վերահսկողություն իրականացնել Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ,

4.2.4 հայցով դիմել դատարան՝ Օրենքի կամ սույն կանոնադրության պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքը անվավեր ճանաչելու նպատակով, օգտվել Օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

4.3 Կազմակերպության հիմնադիրը պարտավոր է՝

4.3.1 ապահովել Կազմակերպության բնականոն գործունեությունը,

4.3.2 չհրապարակել Կազմակերպության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ,

4.3.3 կատարել Կազմակերպության նկատմամբ ստանձնած պարտավորությունները,

4.3.4 պահպանել սույն կանոնադրության դրույթները:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔՆ ՈՒ ՇԱՀՈՒՅԹԸ

5.1 Կազմակերպությունը հանդիսանում է սեփականատեր.

5.1.1 Կազմակերպության հիմնադրի կողմից (հիմնադրման ժամանակ և հետագայում) սեփականության իրավունքով հանձնված գույքի

5.1.2 Կազմակերպության գործունեության հետևանքով արտադրված արտադրանքի և ձեռքբերված գույքի:

Կազմակերպության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց:

Կազմակերպության գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռքբերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները,

կապված գույքը կազմակերպության սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն դրամով:

5.2 Կազմակերպության հիմնադիրը Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ

5.3 Կազմակերպության հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք
Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են:
Ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

5.4 Կազմակերպության գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով

5.5 Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար սահմանված կարգով ու չափով հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները կատարելուց հետո մնացած, սահմանված կարգով առաջացած մաքուր շահույթը Կազմակերպությունն օգտագործում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների (Կազմակերպության տեխնիկական հագեցվածության բարելավում, այդ թվում հիմնական միջոցների ձեռքբերման ճանապարհով, Կազմակերպության աշխատանքային գործունեությունը ապահովող գույքի և նյութերի ձեռքբերում, գրականության ձեռքբերում, բրոշյուրների, գրքույկների, տեղեկագրերի հրապարակման կազմակերպում, պարգևատրումների, հավելավճարների և խրախուսման այլ միջոցներով Կազմակերպության աշխատակիցների սոցիալական պաշտպանվածության բարձրացում, աշխատակիցների որակավորման բարձրացման նպատակով դասընթացների կազմակերպում կամ մասնակցություն կազմակերպված դասընթացներին և այլն) իրականացման համար:
Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

6.1 Կազմակերպության կառավարման մարմիններն են Կազմակերպության հիմնադիրը և տնօրենը:

6.2 Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը Կազմակերպության հիմնադիրն է, որն իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը և որն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Կազմակերպության հիմնադիրը ապահովում է Կազմակերպության բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում սույն կանոնադրությամբ սահմանված գործունեության չկատարման կամ անպատշաճ իրականացման համար:

6.3 Կազմակերպության հիմնադրի իրավասությանն են պատկանում՝

1. Կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը,
2. Կազմակերպության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
3. Կազմակերպությանն սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմի հաստատումը,
4. Կազմակերպությանն ամրացվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կազմի հաստատումը,
5. Կազմակերպության վերակազմակերպումը,
6. Կազմակերպության լուծարումը,
7. Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռների (լուծարման ամփոփիչ, լուծարման միջանկյալ և լուծարման հաշվեկշիռներ) հաստատումը,
8. կազմակերպությունների հիմնադրումը,
9. կազմակերպություններում մասնակցության մասին որոշումների ընդունումը
10. Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը, Կազմակերպության տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
11. Կազմակերպության գործունեության վերահսկողության իրականացումը
12. Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ Կազմակերպության կողմից իրականացվող գործունեության տեսակների և ծրագրերի սահմանումը,
13. Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
14. աուդիտի իրականացման որոշումն ընդունումը,
15. Կազմակերպության տարեկան ծախսերի, այդ թվում՝ արտաբյուջետային եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատումը,
16. Կազմակերպության տարեկան հաշվետվությունների, տարեկան հաշվապահական հաշվեկռի հաստատումը,
17. Կազմակերպության շահույթի ու վնասների օգտագործման կարգի մասին որոշման ընդունումը
18. Կազմակերպության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը,

19. Կազմակերպության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքներ (որոնց արժեքը, գործարքին փոխկապակցված այլ գործարքների հետ միասին գերազանցում է այդ գործարքների կատարելու մասին որոշման ընդունման օրվանը նախորդող եռամսյակի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների մեծության 1/2-ը) կատարելուն համաձայնությունը տալը,
20. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,
21. Կազմակերպության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (Կազմակերպության ներքին փաստաթղթեր) հաստատումը,
22. ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը:
23. Կազմակերպության Հիմնադիրն իրավունք ունի որոշումներ ընդունել նաև Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված ցանկացած այլ հարցի շուրջ:

6.4 Կազմակերպության ընթացիկ, արտադրատնտեսական, ֆինանսական և այլ գործունեության ղեկավարումը իրականացնում է տնօրենը, որին նշանակում և ազատում է Հիմնադիրը երեք տարի ժամկետով: Տնօրեն նշանակվում է Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի՝ 20.03.2020 թվականի թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգին համապատասխան անձը համապատասխան ընթացակարգով: Կազմակերպության և Կազմակերպության տնօրենի միջև աշխատանքային պայմանագիրը հիմնադրի անունից ստորագրվում է համայնքի ղեկավարի կողմից: Պայմանագրում սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, փոխհարաբերությունները Հիմնադրի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման հիմքերը (այդ թվում՝ Օրենքով նախատեսված բոլոր հիմքերը), այլ դրույթներ, որոնք կողմերը կգտնեն անհրաժեշտ:

Տնօրենը լուծում է բոլոր հարցերը՝ բացառությամբ Կազմակերպության Հիմնադրի իրավասությանը վերաբերվող հարցերի: Տնօրենը օրենքով, Հիմնադրի որոշումներով, աշխատանքային պայմանագրով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, Հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության, աշխատանքային պայմանագրի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը, Հիմնադրին, պետությանը պատճառված վնասի համար, ընդ որում՝ տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:

Հիմնադրի անունից հանդես եկող պաշտոնատար անձը (Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնքի ղեկավարը) պարտավոր է օրենքով սահմանված կարգով լուծել վերը նշված վնասի փոխհատուցման հարցը, հակառակ դեպքում, նա կրում է լրիվ գույքային պատասխանատվություն:

Տնօրենի բացակայության դեպքում, Հիմնադրի գրավոր որոշման համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

6.5 Կազմակերպության տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Կազմակերպության:

Կազմակերպության տնօրենը իր իրավասության սահմաններում՝

1. առանց լիազորագրի գործում է Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը պետության, նրա մարմինների, այլ կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում,
2. տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,
3. կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
4. կազմակերպում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը՝ ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը,
5. տալիս է լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
6. բանկում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ,
7. սահմանում է Կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային տարաբաժանումների իրավասությունները,
8. հաստատում է Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին, տալիս է համապատասխան լիազորագրեր,

9. հաստատում է հաստիքներ,
10. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
11. կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,
12. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատակիցներին,
13. Աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
14. սույն կանոնադրության 6.3 կետի 1, 4-8, 11-13, 16, 17, 19, 21-23 ենթակետերով սահմանված հարցերի մասին առաջարկություններ է ներկայացնում Հիմնադրին,
15. իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված կամ Հիմնադրի կողմից տրված այլ լիազորություններ և հանձնարարություններ:

6.6 Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադրի կողմից լիազորված անձը, օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:
Կազմակերպության տարեկան ֆինանսական հավետվության հավաստիությունը վերստուգելու համար Հիմնադիրն իրավունք ունի ամեն տարի ներգրավել Կազմակերպության, Կազմակերպության տնօրենի, գույքային շահերով չկապված արհեստավարժ վերստուգիչ՝ աուդիտորի (արտաքին աուդիտ):

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս Կազմակերպությունը չունի ճյուղեր և ներկայացուցչություններ:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

8.1 Կազմակերպությունը, նրա Հիմնադրի որոշմամբ, կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սհմանված կարգով:
Կազմակերպությունը կարող է դատական կարգով վերակազմակերպվել կամ լուծարվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:
Եթե լուծարվող Կազմակերպության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

8.2 Կազմակերպությունն իրավունք ունի վերակազմավորվել հարյուր տոկոս համայնքային (Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք) մասնակցությամբ կամ հիմնադրամի:

8.3 Կազմակերպության լուծարման դեպքում Կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնքի բյուջե:

8.4 Կազմակերպությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած՝ այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից:

Աշխատակազմի քարտուղար՝ **Գ. Սիմոնյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 112-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Արենի համայնքի ղեկավարի 2022 թվականի երրորդ եռամսյակի բյուջեի կատարման հաղորդումը ընդունել ի գիտություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված Արենի համայնքի ավագանու
18.10.2022թ-ի թիվ 112-Ա որոշման

2022թ 9 ամիս

Եկամտային մաս. հազար դրամ

Եկամտատեսակ	Նախատեսված	Կատարողական	Կատարման տոկոս
Անշարժ գույքի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	9249,4	7483,2	80,9
Հողի վարձավճար համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	11132,0	11212,5	100,7
Գույքահարկ	29290,0	34656,3	118,3
Տեղական տուրքեր	2029,0	5513,6	271,7
Գույքի վարձակալությունից եկամուտներ	852,0	916,0	107,5
Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	253344,4	253344,4	100,0
Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ	1539,7	1539,7	100,0
Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ/սուբվենցիաներ/	1889,4	1889,4	100,0
Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	309757,2	309757,2	100,0
Աղբահանության, խմելու ջրի և ոռոգման ջրի վճարներ	10458,0	8171,9	78,1
Մանկապարտեզի ծնողական վճարներ	4278,0	4907,4	114,7
Արտադպրոցական դաստիարակություն	1340,0	1174,5	87,6
Նվիր., ժառանգ. Իրավ. ֆիզ. անձ. և կազմակերպ.-ից	3750,0	1250,0	33,3
Այլ եկամուտներ/օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/	3400,0	10140,0	298,2
Ընդամենը	**642309,1**	**651956,1**	**101,5**
ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ /Հողի գրասենյակ/ՄՈՒՏՔԵՐ	105000,0	61417,9	58
Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր	0,0	3666,9	

Ծախսային մաս	Նախատեսված	Կատարողական	Կատարման տոկոս
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	100215,0	92506,7	92,3
Գործուղումների և շրջագայությունների ծախսեր	2506,5	2184,8	87,2
Էներգետիկ ծառայություններ	15000,0	16425,2	109,5
Կապի ծառայություններ	824,0	576,0	69,9
Ապահովագրական ծախսեր	350,0	223,0	63,7
Պայմանագրային ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	30525,0	27119,5	88,8
Դրամաշնորհներ	137500,0	136275,6	99,1
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	4800,0	4656,0	97,0
Այլ ծախսեր	5250	4971,0	94,7
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում, շինարարություն	465000,0	453617,0	97,6
Նախագծահետազոտական ծախսեր	20500,0	18219,9	88,9
Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ	7940,0	7856,2	98,9
Ընդամենը	**790410,5**	**764630,9**	**96,7**

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 113-Ն

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 4239 / ընդհանուր բնույթի այլ ծառայություններ / հոդվածից պակասեցնել 316 000 ՀՀ դրամ և ուղղել նույն ոլորտի 4622 /կապիտալ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին/ հոդվածին:

2. Արենիի այլ ոչ հարկային եկամուտներ գործառնական դասակարգման 28 բաժնի 50 խմբի 00 դասի եկամտատեսակում ավելացնել 10 000 000 ՀՀ դրամ և նշված գումարը ուղղել.

ա/ Արենի համայնքի սոցիալապես անապահով անձանց աջակցություն 10 բաժնի 07 խմբի 01 դասի 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածին՝ 1 000 000 ՀՀ դրամ:

բ/ Արենիի համայնքապետարանի պահուստային ֆոնդ գործառանկան դասակարգման 11 բաժնի 01խմբի 02 դասի 4891 /պահուստային միջոցներ/ հոդվածին՝ 9 000 000 ՀՀ դրամ:

3. Արենիի համայնքապետարանի պահուստային ֆոնդ գործառնական դասակարգման 11 բաժնի 01 խմբի 02 դասի 4891 /պահուստային միջոցներ/ հոդվածից

կատարել հատակացում ֆոնդային բյուջե 9 000 000 ՀՀ դրամ և նշված գումարը ուղղել .

ա/ ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում գործառնական դասակարգման 04 բաժնի 02 խմբի 04 դասի 5112 /շենքերի և շինությունների շինարարություն / հոդվածին՝ 4 000 000 ՀՀ դրամ,
բ/ ջրամատակարարում և կոյուղու համակարգ գործառնական դասակարգման 06 բաժնի 03 խմբի 01 դասի 5112 /շենքերի և շինությունների շինարարություն / հոդվածին՝ 5 000 000 ՀՀ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 114-Ա

ԱՐՓԱ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ 1 000 000 ՀՀ ԴՐԱՄԸ 2021ԹՎԱԿԱՆԻՆ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42-րդ կետերի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն Արփա բնապահպանական հիմնադրամի կողմից հատկացված 1 000 000 ՀՀ դրամը 2021թվականին վայրի կենդանիներից տուժած համայնքի բնակիչներին հատկացնելուն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
Արենի համայքնի ավագանու 18.10.2022թ.
թիվ 114Ա-որոշման

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ-ին Արենի համայնքի բնակավայրերում վայրի կենդանիների կողմից գյուղացիական տնտեսություններին հասցված վնասի վերաբերյալ

n/h	Բնակավայր	Անուն ազգանուն	Վնաս հասցրած օրերը	Վնասի տեսակը	Հեռ.	Հասցված վնասի չափը հհ դրամ	33%
1	Արփի	Արզուման Մարգարյան	05/03/2021թ	10 հատ ճագար	93706019	40000	14000
2		Վարդուհի Հովսեփյան	29/06/2021թ	14 հատ հավ	93390120	49000	17000
3		Գայանե Աբրահամյան	30/06/2021թ	20 հատ հավ	94004707	70000	25000
4		Նորայր Պետրոսյան	30/06/2021թ	1 մեղվաընտանիք 5 հավ	93891325	57500	20000
5		Աշոտ Գրիգորյան	30/06/2021թ	20 հատ հավի ճուտ	94004707	20000	10000
6		Գագիկ Հայրապետյան	01/07/2021թ	8 ճագար	93490936	32000	11000
7		Վարդգես Հայրապետյան	01/07/2021թ	5 հատ հավ	77749219	17500	10000
8		Համլիկ Վարդանյան	02/07/2021թ	26 հատ հավ	98077484	91000	30000
9		Արզուման Մարգարյան	03/10/2021թ	17 հատ ճագար	93706019	59500	20000
10		Տիգրան Մարգարյան	17/08/2021թ	15 հատ հավ	98200852	52500	19000
11		Վիտյա Մարգարյան	23/09/2021թ	6 հատ հավ	77765133	21000	10000
12		Պետիկ Մեհրաբյան	27/08/2021թ	6 հատ հավ	77302293	21000	10000
13		Ազատ Հովսեփյան	23/09/2021թ	20 հատ հավ	93429827	70000	20000
14		Նաիրի Պետրոսյան	07/07/2021թ	11 հատ հավ	77758417	38500	15000
15	Ռինդ	Գայանե Սարգսյան	24/09/2021թ	5 հորթ, 1 ցուլ	94932604	940000	300000
16		Կարինե Մարտիրոսյան	03/08/2021թ	2 դեղձենի	94 392 954	15000	6000
17		Կարինե Մարտիրոսյան	25/06/2021թ	2 ծիրանենի	94 392 954	20000	7000
18		Աշոտ Խաչատրյան	23/07/2021թ	1 դեղձենի,3 ծիրանենի	94748018	30000	10000
19		Հովհաննես Ասատրյան	27/07/2021թ	4 դեղձենի	98015259	30000	10000
20		Հովհաննես Ասատրյան	08/09/2021թ	11 պտղատու ծառեր	98015259	60000	20000
21		Հովհաննես Ասատրյան	02/09/2021թ	3 նուշ, 20 խնձոր	98015259	90000	30000
22		Արծրուն Ավետիսյան	14/08/2021թ	20 դեղձենի(1 տոննա)	94485537	140000	50000
23		Հովհաննես Ասատրյան	11/08/2021թ	50 կգ դեղձ	98015259	5000	2000
24		Արմեն Խաչատրյան	06/09/2021թ	1 ԽԵԱ	93179906	280000	90000
25		Մանվել Գրիգորյան	21/08/2021թ	6 դեղձենի	93546783	50000	17000
		Աշոտ Ավետիսյան	28/07/2021թ	13 դեղձենի	93131848	100000	33000
26		Հրանտ Հարությունյան	27/06/2021թ	10 ծիրանենի	93131848	110000	36000
27		Հրանտ Հարությունյան	09/07/2021թ	2 ծիրանենի	93131848	15000	5000
28	Ելփին	Կարեն Մովսիսյան	16/06/2021թ	2 կեռասենի	93034479	15000	5000
29		Արմեն Բաբայան	06/08/2021թ	2 դեղձենի	94914014	14000	5000
30		Աղասի Գրիգորյան	02/09/2021թ	3 դեղձենի, 1 սալոր	94883601	30000	10000
31		Ռաֆիկ Պողոսյան	12/08/2021թ	2 կեռասենի, 2 խնձորենի	98566055	30000	10000
32		Հակոբ Բաղալյան	10/08/2021թ	7 պտղատու ծառ	98768561	40000	14000
33		Խորեն Ավետիսյան	20/08/2021թ	8 դեղձենի	93075577	50000	16000
34		Վահան Բաղալյան	20/08/2021թ	6 դեղձենի	77995776	40000	13000
35		Վահան Բաղալյան	14/08/2021թ	2 դեղձենի	77995776	15000	5000
37		Աղասի Գրիգորյան	25/06/2021թ	2 կեռասենի	94883601	15000	5000
38	Աղավնաձոր	Էդգար Բեգլարյան	24/03/2021թ	10 մեղվաընտանիք		200000	70000
	Ընդամենը					2973500	1000000

Աշխատակազմի քարտուղար Գ. Սիմոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 115-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 0.04866ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածի 15-րդ մասի, ՀՀ կառավարության 17.06.2021թվականի թիվ 987-Ն որոշմամբ սահմանված կարգի 1-ին մասի 14-րդ կետի պահանջներով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 0.04866հա (ծածկագիրը՝ 10-006-0339-, գործառնական նշանակությունը արոտավայր) գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա, գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության՝ ինքնակամ կառուցված պահեստի շենքը օրինականացնելու նպատակով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 116-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՈՎ 1 ԳԼՈՒԽ ՀՂԻ ԿՈՎ ԳՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հարգել Արենի համայնքի ղեկավարի 11.10.2022թվականի թիվ 151 կարգադրությամբ ստեղծված <<Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի բնակիչ Արմեն Մանուկյանի կողմից իրականացվող սոցիալական ծրագրի նկատմամբ մշտադիտարկում և հսկողություն իրականացնելու նպատակով>> ժամանակավոր հանձնաժողովի առաջարկը և տալ համաձայնություն Արենիի համայնքապետարանի կողմից հատկացված 500 000 ՀՀ դրամ գումարով գնել մեկ գլուխ հղի կով:

2. Կատարված աշխատանքների մասին պարբերաբար ներկայացնել հաշվետվություն Արենի համայնքի ավագանուն:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 117-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԳԱՌՆԻԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հարգել Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի բնակիչ, պատերազմի մասնակից Գառնիկ Միքայելյանի դիմումը և հատկացնել միանվագ դրամական աջակցություն՝ 100 000 ՀՀ դրամի չափով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 118-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող .

1.1 15.11737 հա (ծածկագիրը՝ 10-008-0140-, գործառնական նշանակությունը վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով, 5 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 160 000 ՀՀ դրամ:

1.2 15.11929 հա (ծածկագիրը՝ 10-008-0140-, գործառնական նշանակությունը վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով, 5 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 160 000 ՀՀ դրամ:

1.3 6.22477 հա (ծածկագիրը՝ 10-008-0140-, գործառնական նշանակությունը վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով, 5 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 65 000 ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 4.45700 հա (ծածկագիրը՝ 10-037-0105-, գործառնական նշանակությունը վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով, 10 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 50 000 ՀՀ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 119-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18.09.2020ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 108 ԵՎ 19.04.2022ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 44-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Արենի համայնքի ավագանու 18.09.2020թվականի <<Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելու մասին>> թիվ 108 որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ 4.1 կետի մեջ <<88 898>> թիվը փոխարինել <<220 000>> թվով:

2. Արենի համայնքի ավագանու 19.04.2022թվականի <<Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ-վաճառքով օտարելու մասին>>թիվ 44-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ 1.1 կետի մեջ <<71 000>> թիվը փոխարինել <<175 000>> թվով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 120-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 3-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է***՝

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.48962 հա (ծածկագիրը՝ 10-008-0126-0004, գործառնական նշանակությունը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ից ոչ պակաս 400 000 ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.52462 հա (ծածկագիրը՝ 10-037-0105-, գործառնական նշանակությունը՝ վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ից ոչ պակաս 600 000 ՀՀ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**